Կազմեց՝	*Հավանության է արժանացել*	*Հաստատվել է*
Իրավաբանական դեպարտամենտի Կորպորատիվ կառավարման բաժնի ավագ իրավաբան՝	*Տնօրինության 17.04.2020թ. թիվ 03/49/20 որոշմամբ* *Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն՝*	*Տնօրենների Խորհրդի 08.05.2020թ. թիվ 04/20/09 որոշմամբ* *Տնօրենների Խորհրդի նախագահ՝*
Գոհար Սիսակյան	*Արտակ Հանեսյան*	*Անդրեյ Մկրտչյան*

Խմբ.	*Փոփոխություն*	*Կազմեց*	*Որոշումը և ուժի մեջ մտնելու ժամկետը*
1.	***Հաստատվել է քաղաքականությունը***	*Իրավաբանական ծառայության ղեկավար՝ Հասմիկ Անդրիասյան*	*Տնօրենների Խորհրդի 20.12.2010թ. թիվ 35/10/02 որոշում Ուժի մեջ է՝ 20.12.2010թ.-ից*
2.	***Քաղաքականության մեջ կատարվել են հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝*** • *2.1.1-2.1.3 կետերում հստակեցվել են Քաղաքականության նպատակները:* • *4.1 կետում կատարվել է լրացում՝ Բանկի կողմից շահութաբաժինների հայտարարման և վճարման համար որպես բացառություն սահմանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվների խախտման դեպքերը:*	*Իրավաբանական ծառայության ղեկավար՝ Հասմիկ Անդրիասյան*	*Տնօրենների Խորհրդի 03.06.2013թ. թիվ 13/13/02 որոշում Ուժի մեջ է՝ 14.06.2013թ.-ից*

	• *5.1 կետում կատարվել է լրացում՝ շահութաբաժինների վճարման համար նորմատիվային զուտ շահույթից և ֆինանսական հաշվետվողականության և միջազգային ստանդարտների համաձայն հաշվարկված զուտ շահույթից նվազագույնով առաջնորդվելու մասին:* • *6.3.3 կետում կատարվել է լրացում՝ միջանկյալ շահութաբաժինների վճարման և չափի սահմանման մասին որոշումը Տնօրենների Խորհրդի կողմից կայացնելու մասին*		
3.	***Փոփոխվել են քաղաքականության 4.2. և 4.3. կետերը***	*Իրավական խորհրդատու՝ Հրաչյա Մարանգուլյան*	*Տնօրենների Խորհրդի 28.08.2013թ. թիվ 19/13/01 որոշում Ուժի մեջ է՝ 18.09.2013թ.-ից*
4.	***Քաղաքականության մեջ կատարվել են հետևյալ փոփոխություններ.*** • *փոփոխվել է քաղաքականության 1.2. կետը* • *ստորաբաժանումների անվանումները համապատասխանեցվել են կազմակերպական կառուցվածքի փոփոխություններին*	*Իրավաբանական դեպարտամենտի Կորպորատիվ կառավարման բաժնի ղեկավար՝ Հասմիկ Անդրիասյան*	*Տնօրինության 16.10.2014թ. հեռակա նիստի թիվ 09/107/14 որոշում Տնօրենների Խորհրդի 11.11.2014թ. թիվ 10-1/14/10 որոշում Ուժի մեջ է՝ 01.12.2014թ.-ից*
	Քաղաքականությունը	*Իրավաբանական*	*Տնօրինության 26.08.2015թ.*

	վերահաստատվել է 4-րդ խմբագրությամբ	*դեպարտամենտի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան*	*թիվ 09/23/15 որոշում (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 31.08.2015թ.-ից*
	Քաղաքականությունը վերահաստատվել է 4-րդ խմբագրությամբ	*Իրավաբանական դեպարտամենտի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան*	*Տնօրինության 09.08.2016թ. թիվ 02/118/16 որոշում (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 15.08.2016թ.-ից*
	Քաղաքականությունը վերահաստատվել է 4-րդ խմբագրությամբ	*Ինովացիաների և որակի բաժնի ավագ մասնագետ՝ Լիլիթ Մեշչյան*	*Տնօրինության 07.12.2017թ. թիվ 02/184/17 որոշմամբ (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 28.12.2017թ-ից*
5.	*Քաղաքականությունը խմբագրվել է՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխություններով:*	*Բիզնես վերլուծության, գործընթացների և պրոդուկտների մշակման բաժնի Գործընթացների և ներքին փաստաթղթերի մշակման բիզնես վերլուծաբան՝ Հասմիկ Մանուկյան*	*Տնօրինության 23.09.2019թ. թիվ 04/109/19 որոշմամբ (հիմք՝ Տնօրենների խորհրդի 19.07.2019 թ. թիվ 06-1/19/01որոշում) Ուժի մեջ է՝ 27.09.2019թ-ից*
6.	*Քաղաքականությունն ամբողջությամբ խմբագրվել է:*	*Իրավաբանական դեպարտամենտի Կորպորատիվ կառավարման բաժնի ավագ իրավաբան՝ Գոհար Սիսակյան*	*Տնօրինության 17.04.2020թ. թիվ 03/49/20 որոշում Տնօրենների Խորհրդի 08.05.2020թ. թիվ 04/20/09 որոշում Ուժի մեջ է՝26.05.2020թ.-ից*

Կարգավորման շրջանակը

Սույն փաստաթղթով սահմանվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժնային քաղաքականությունը, դրա նպատակները և սկզբունքները, Բանկի

կողմից շահութաբաժինների բաշխման/վճարման կարգն ու պայմանները, Բանկի կողմից շահութաբաժինների վերաբերյալ որոշումներ ընդունող մարմինների միջև իրավասությունների բաշխումը:

Կիրառումը

Քաղաքականությունը կիրառվում է Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի, Տնօրինության, Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենի, Ֆինանսական տնօրենի, Խորհրդի քարտուղարի, Իրավաբանական դեպարտամենտի, Ֆինանսական և գործառնական դեպարտամենտի կողմից:

Կարգավորող փաստաթղթեր

ISO 9001:2015
«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք
ՀՀ օրենսդրություն
ՀՀ ենթաօրենսդրական ակտեր
Բանկի կանոնադրություն
Բանկի հեռանկարային զարգացման ծրագիր
Բանկի Բաժետերերի Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի որոշումներ

Տարածումը

Բաժնետերերի Ընդհանուր Ժողով
Տնօրենների Խորհուրդ
Տնօրինություն
Տնօրինության նախագահ - Գլխավոր Տնօրեն
Ֆինանսական տնօրեն
Ֆինանսական և գործառնական դեպարտամենտ
Իրավաբանական դեպարտամենտ
Խորհրդի քարտուղար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բանկի կողմից շահութաբաժինների, ներառյալ՝ շահութաբաժինների բաշխման/վճարման, դրանց չափի և վճարման կարգի ու պայմանների, վերաբերյալ որոշումների կայացումն, ինչպես նաև շահութաբաժինների վճարման գործընթացը

պետք է իրականացվի համաձայն սույն փաստաթղթով սահմանված Բանկի շահութաբաժնային քաղաքականության:

1.2. Շահութաբաժնային քաղաքականությունը մշակելիս և շահութաբաժինների վերաբերյալ որոշումներ կայացնելիս Բանկը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ, սույն փաստաթղթով և ներքին իրավական այլ ակտերով:

1.3. Հիմք ընդունելով Տնօրենների Խորհրդին՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21.6 հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, ինչպես նաև 36-րդ հոդվածի 2-րդ մասով վերապահված իրավասությունները, Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը և դրանում առաջարկվող փոփոխությունները հաստատվում են Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից:

2. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Շահութաբաժնային քաղաքականության և շահույթի բաշխման **նպատակներն** են /ըստ առաջնահերթության նվազման/՝

2.1.1. Բանկի բաժնետերերի համար շահութաբերության այնպիսի մակարդակի ապահովումը, որը լավագույնս կհավասարակշռի բաժնետերերի և Բանկի գործադիր մարմնի շահերը, ինչպես նաև թույլ կտա Բանկին իրականացնել իր հեռանկարային զարգացման ծրագրերը՝ մնալով մրցունակ և շահութաբեր,

2.1.2. Բանկի բաժնետերերի համար Բանկի գործունեության շուկային համեմատելի և առնվազն միջինից բարձր շահութաբերության մակարդակի ապահովումը,

2.1.3. Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված և/կամ Բանկի երկարաժամկետ աճի ապահովման և երկարաժամկետ նպատակների իրագործման համար անհրաժեշտ համապատասխան ցուցանիշների կատարողականի ապահովումը:

3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Բանկի շահութաբաժնային քաղաքականությունն ու շահույթի բաշխումը հիմնված է հետևյալ **սկզբունքների** վրա՝

3.1.1. ***Իրավաչափություն.*** Բանկի կողմից շահութաբաժինների վերաբերյալ որոշումների կայացումն ու շահույթի բաշխումը/վճարումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված պահանջերին համապատասխան:

3.1.2. ***Իրավասությունների բաշխում.*** Բանկի կողմից շահութաբաժինների վերաբերյալ որոշումների կայացումն, ինչպես նաև շահութաբաժինների

վճարման գործընթացը պետք է իրականացվի համաձայն ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, սույն փաստաթղթով և/կամ Բանկի այլ ներքին իրավական ակտերով սահմանված Բանկի կառավարման մարմինների (Բաժնետերերի Ընդհանուր Ժողով և Տնօրենների Խորհուրդ) և/կամ Բանկի համապատասխան ղեկավարների/պատասխանատու ստորաբաժանումների միջև իրավասությունների/պարտականությունների բաշխման տրամաբանության:

3.1.3. ***Շահութաբաժինների վճարում Բանկի զուտ շահույթից:***

3.1.4. ***Բանկի բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Բանկի կողմից չեն երաշխավորվում***, և Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չբաշխելու/չվճարելու մասին:

4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ/ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

4.1. Բանկը կարող է հայտարարել և բաշխել/վճարել միջանկյալ (եռամսյակային և/կամ կիսամյակային) կամ տարեկան շահութաբաժիններ:

4.2. Բանկի կողմից իր բաժնետերերին վճարվող շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել համապատասխան ժամանակահատվածի դրությամբ գոյացած Բանկի զուտ շահույթի 100 տոկոսը:

4.3. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված և/կամ բաշխման ենթակա շահութաբաժնի 50 տոկոսը, ինչպես նաև վճարման պահի դրությամբ Բանկի զուտ շահույթի 100 տոկոսը:

4.4. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

4.5. Եթե Ընդհանուր Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների սահմանված չափը հավասար է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

4.6. Եթե Ընդհանուր Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

4.7. Անկախ Բանկի համապատասխան իրավասու մարմնի կողմից շահութաբաժինների բաշխման/վճարման վերաբերյալ կայացված որոշումից՝ ***արգելվում է շահութաբաժիններ բաշխելը/վճարելը հետևյալ դեպքերում***.

4.7.1. շահութաբաժիններ բաշխելու/վճարելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը,

4.7.2. Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է Բանկի կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ բաշխելու/վճարելու արդյունքում կպակասի դրա չափից,

4.7.3. ամբողջությամբ համալրված/վճարված չէ Բանկի կանոնադրական կապիտալը,

4.7.4. շահութաբաժինների բաշխումը/վճարումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը,

4.7.5. շահութաբաժինների բաշխման/վճարման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ,

4.7.6. Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման/վճարման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը),

4.7.7. ՀՀ կենտրոնական բանկը սահմանափակել կամ արգելել է Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխումը/վճարումը,

4.7.8. ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում:

5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Շահութաբաժինները վճարվում են Բանկի պահուստային հիմնադրամ և այլ հիմնադրամներ կատարվող փոխանցումներից ու բյուջետային հատկացումներից հետո մնացած շահույթից /Բանկի զուտ շահույթից/ կատարվող մասհանումների հաշվին: Ընդ որում, շահութաբաժինները վճարելիս Բանկն առաջնորդվում է նորմատիվային զուտ շահույթից և ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների համաձայն հաշվարկված զուտ շահույթից նվազագույնով:

5.2. Շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցում կատաելու միջոցով:

5.3. Բանկի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ կարող են վճարվելու/բաշխվել միայն միաժամանակ բոլոր հետևյալ պայմանների պահպանման դեպքում.

5.3.1. Առկա է համապատասխան ժամանակահատվածի դրությամբ գոյացած Բանկի զուտ շահույթ,

5.3.2. Բանկի իրավասու մարմնի կողմից կայացվել է շահութաբաժինների բաշխման/վճարման վերաբերյալ որոշում, որով սահմանվել են բաշխման/վճարման ենթակա շահութաբաժինների չափը, ինչպես նաև շահութաբաժինների վճարման կարգն ու պայմանները,

5.3.3. Շահութաբաժինների բաշխման/վճարման պահի դրությամբ առկա չէ սույն քաղաքականության 4.7. կետում նշված հանգամանքներից որևէ մեկը և/կամ շահութաբաժինների բաշխումը/վճարումը չի հանգեցնի այդ հանգամանքներից որևէ մեկի առաջացմանը:

5.4. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը Բանկի Տնօրենների Խորհրդի առաջարկության հիման վրա որոշում է կայացնում տարեկան շահութաբաժինների վերաբերյալ /բաշխել կամ չբաշխել/, ինչպես նաև սահմանում է բաշխման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը, դրանց վճարման կարգը ու պայմանները /ներառյալ՝ ժամկետները/: Որպես կանոն, տարեկան շահութաբաժինների վերաբերյալ որոշումն ընդունվում է Բանկի Տարեկան Ընդհանուր ժողովի կողմից, սակայն այն կարող է կայացվել նաև Բանկի Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի կողմից:

5.5. Միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից: Տնօրենների Խորհուրդը սահմանում է միջանկյալ շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը ու պայմանները /ներառյալ՝ ժամկետները/:

5.6. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

5.7. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Տնօրենների Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր հետո:

5.8. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Բանկի Տնօրենների Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

5.8.1. միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Տնօրենների Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

5.8.2. տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ /ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ/ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Բանկի կողմից շահութաբաժնային քաղաքականության մշակման, հաստատման ու իրագործման, ինչպես նաև շահութաբաժինների վերաբերյալ որոշումների

կայացման ու շահութաբաժինների բաշխման/վճարման գործընթացում Բանկի կառավարման մարմինների և/կամ Բանկի համապատասխան ղեկավարների/պատասխանատու ստորաբաժանումների իրավասությունները հետևյալն են.

6.1.1. ***Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը*** ՝

6.1.1.1. հաստատում է Բանկի կանոնադրության մեջ շահութաբաժինների վերաբերյալ լրացումները/փոփոխությունները,

6.1.1.2. Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա ընդունում է Բանկի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների, ներառյալ՝ դրանց բաշխման/վճարման չափի, կարգի և պայմանների, վերաբերյալ որոշում,

6.1.1.3. անհրաժեշտության դեպքում՝ վերանայում և հաստատում է Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված շահութաբաժնային քաղաքականությունը, ինչպես նաև ներկայացնում Բանկի շահութաբաժնային քաղաքականության փոփոխության վերաբերյալ առաջարկներ:

6.1.2. ***Բանկի Տնօրենների Խորհուրդը*** ՝

6.1.2.1. մշակում և հաստատում է Բանկի շահութաբաժնային քաղաքա-կանությունը, դրանում առաջարկվող փոփոխությունները:

6.1.2.2. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին ներկայացնում է առաջարկություններ Բանկի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների, ներառյալ՝ դրանց բաշխման/վճարման չափի, կարգի և պայմանների, վերաբերյալ,

6.1.2.3. ընդունում է Բանկի բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահութաբաժինների, ներառյալ՝ դրանց բաշխման/վճարման չափի, կարգի և պայմանների, վերաբերյալ որոշում,

6.1.2.4. կազմում է Բանկի բաժնետոմսերի դիմաց տարեկան և միջանկյալ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը:

6.1.3. ***Բանկի Տնօրինությունը, Գլխավոր տնօրենը և/կամ Ֆինանսական տնօրենը*** ՝

6.1.3.1. իրավասու են Տնօրենների խորհրդին առաջարկություններ ներկայացնել Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող միջանկյալ և/կամ տարեկան շահութաբաժինների /ներառյալ՝ դրանց բաշխման/վճարման չափի, կարգի և պայմանների/ վերաբերյալ:

6.1.4. ***Բանկի Ֆինանսական տնօրենը*** ՝

6.1.4.1. ապահովում է միջանկյալ և տարեկան շահութաբաժինների բաշխման/վճարման ամբողջ գործընթացի համապատասխանությունը Բանկի իրավասու կառավարման մարմնի (Բաժնետերերի Ընդհանուր Ժողով և Տնօրենների Խորհուրդ) որոշմամբ սահմանված կարգին ու պայմաններին /ներառյալ՝ ժամկետներին/, ինչպես նաև սույն քաղաքականությամբ սահմանված պահանջներին։